



Զահրատ

Մարդու միս

Սարգիս Պողոսեանին

Երբ երկու կողմը շենքեր շինեցին
Փողոցը ծնաւ

Մեծ էին շենքերն այնպէս հոյակապ որ երբ հարցուցին
Փողոց չեմ ըսաւ պողոտայ եմ ես

Եւ ալ ամէն օր մեծ մարդիկն ըսես թէ ինքնաշարժերն
Իրենց շքեղութեամբ գայն փայփայելէն անցան ու գացին

Փողոցը կրեց հոսանքն այդ հարուստ գարդերն այդ փարթամ

Իր մորթին վրայ գոհարներու պէս

Կարծես ամէն ինչ արագ ու փայլուն տօնական էին
Պերճանքը ճանչցաւ

Եկան ու գացին հետքերն ալ տակաւ կորսուեցան միշտ
Մէկ բան չմոռցաւ

Թէ օր մ'ալ մարդ մը բոպիկ ոտքերով անցաւ տատամստ
Այդ օր պողոտան մարդու միս ճանչցաւ